ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-25/129 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
23	Մարզասարք ոտքերի հրում Մարզասարքի կմախքային հատվածը պատրաստված լինի մետաղական 40x80մմ կտրվածքի ուղղանկյուն խողովակից, պատի հաստությունը առնվազն 2.5մմ: Թեք տեղադրված սյուները պատրաստված լինեն 80x120մմ ուղղանկյուն կտրվածքի խողովակից պատի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսեր՝ 2200x1200x1400մմ: Մարզասարքի աշխատանքը հիմնված լինի ռետինապատ անիվների մեխանիզմի վրա: Մարզասարքը պետք է ունենա թվով 4 հատ 30սմ քրոմապատ խողովակից ելքեր ծանրաքարեր տեղադրելու համար: Առավելագույն ծանրաբեռնվածություն 500կգ: Նստատեղը կարգավորվող: Նստատեղերը կարված լինեն բարձր որակի արհեստական կաշվից՝ ներսում առնվազն 4սմ օրթոպետիկ բարձր խտության սպունգից: Հատակի հատվածում ունենա ռետինե ոտքեր հատակը չվնասելու համար: Մարզասարքը ամբողջությամբ ենթարկված լինի փոշեներկման: Պայմանագրի կատարման փուլում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները գնորդի կողմից պահպանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և բաշխումը, իրականացվում է Վաճառողի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/129 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
23	